



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

30 հունվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2  
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի

Ա. Խաչատրյանի

Քննության առնելով Վաղինակ Հայրապետյանի անհատական դիմումի ընդունելիության  
հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Վաղինակ  
Հայրապետյանը 2017թ. հունվարի 11-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

*«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասը, ... թիվ  
ԵԱՔԴ/1686/02/16 քաղաքացիական գործով, ճանաչել ՀՀ Սահմանադրության (2015 թվականի  
փոփոխություններով) 61-րդ, 63-րդ, 78-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր  
այն մասով, որ չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն  
չներկայացնելու հիմքով՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը  
շտկելու և օրենքով սահմանված ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն»:*

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ.

1. Դիմողը գտնում է, որ իր կողմից վիճարկվող դրույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոք ներկայացվել է դատավարական ժամկետի խախտմամբ և չի պարունակում ժամկետը վերականգնելու միջնորդություն, վերաքննիչ բողոքը վերադարձվում է՝ առանց թույլ տրված խախտումը վերացնելու համար ժամկետ տրամադրելու, ինչը հանգեցրել է բողոքի ընդունման մերժմանը:

Ըստ դիմողի՝ նման սահմանափակումը չի հետապնդում որևէ իրավաչափ ողջամիտ նպատակ, որի պարագայում արդարացված կարող է համարվել նման թերացում թույլ տված անձին վերաքննիչ բողոքի ներկայացման հնարավորությունից զրկելը:

2. Դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի հունիսի 28-ի ՍԴՈ-1290 որոշումը, ըստ որի՝ ՀՀ սահմանադրական դատարանը Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61-րդ, 63-րդ, 78-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր է ճանաչել խնդրո առարկա դրույթն այն մասով, որ չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու և օրենքով սահմանված ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն:

Հետևաբար, առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

Վաղինակ Հայրապետյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

30 հունվարի 2017 թվականի  
ՍԴԴԿՈ/2-1